ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2023 թվականի № 279-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐԹՈՒՐ ՎԱՆՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1499-Ն որոշման 4-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթայակության «Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայությանն անցնելու կապակցությամբ գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կատարելու նպատակով ստեղծել ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Կարեն Հունանյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

2) ***Լեյլի Խաչատրյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

3) ***Մեղա Բաղդասարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ,

4) ***Կարեն Հովհաննիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության ավագ մասնագետ:

2. Հանձնաժողովի նախագահին՝ աշխատանքներն ավարտել մինչև *2023 թվականի հոկտեմբերի 6-ը* և հանձնման-ընդունման ակտը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հաստատմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 25
ք. Հրազդան